

ՀՀ Արագածոտնի մարզպետարան-ի **ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ** Նախագծա-նախահաշվային  
փաստաթղթերի կազման **ԿԱՏԱՐՄԱՆ**  
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**  
**N ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/5-ՆԱԽ-ՏՐԱՆՍՊՈՐՏ**

ք. Աշտարակ

31 մայիսի 2014 թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Հ. Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էկոպրոեկտ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Եզանյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) Նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, մեքենա-սարքավորումներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) Պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 7օրվա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 5 291 000 հինգ միլիոն երկու հարյուր ինսունամեկ հազար ՀՀ դրամ : Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 րանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում է հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներին հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծած ու փորձաքննություն իրականացրած անձինք պատվիրատուին վճարում են տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման և (կամ) դրա հետևանքով առաջացած կորստի չափում Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (\$ՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերում պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> << օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հատուց գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել որ մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ:

2) Կատարողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պատվիրատու**

ՀՀ Արագածոտի մարզպետարան  
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի վ.  
Պետրոսյան 4  
ՀՀ Ֆինանսների նախարարության  
գործառնական վարչություն  
h/h 900441041184 ՀՎՀՀ 05004247  
Աշխատակազմի ղեկավար՝

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Էկոպրոեկտ» ՍՊԸ  
ՀՀ Լոռու մարզ ք. Վանաձոր Աղայան 94/31  
Հեռ. 094660025  
ՎՏԲ-Հայաստան բանկ Վանաձոր մ/6  
h/h 16036028818900 ՀՎՀՀ 06929779


Տնօրեն՝

Ա. Եգանյան



Գևորգյան

*[Handwritten signature]*  
(տնօրենի պաշտոն)



## ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ

Ձեռքբերվող Աշխատանքի նկարագիր
<p><b>Նախագծվող կառույցի բնութագիրը --- Կարբի համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում:</b></p> <p>Նախագծի տեսակը --- <b>Կարբի համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում</b> աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում</p> <p>Նախագծի կազմը --- Աշխատանքների նախագիծ՝ աշխատանքների կազմման նախագիծ, լոկալ և ամփոփ նախահաշիվներ (3 օրինակ) տեխնիկական պայմանների ուսումնասիրություն և ձեռք բերում: Նախագծի համալիր փորձաքննության դրական եզրակացության ստացում: Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ --- Չափագրում, թերությունների ակտի կազմում</p> <p>Այլ պահանջներ --- Նախագիծը համաձայնեցնել շահագործողի և համայնքի ղեկավարի հետ: Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատումներն իրականացնել համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարության &lt;&lt;Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն&gt;&gt; ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի: Օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշները նախահաշվում և ծավալաթերթում նկարագրել առավել մանրամասն և սպառիչ: Առաջարկվող շինանյութերը պետք է լինեն լավորակ:</p> <p><b>Նախագծվող կառույցի բնութագիրը --- Կարմրաշեն համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում:</b></p> <p>Նախագծի տեսակը --- <b>Կարմրաշեն համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում</b> աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում</p> <p>Նախագծի կազմը --- Աշխատանքների նախագիծ՝ աշխատանքների կազմման նախագիծ, լոկալ և ամփոփ նախահաշիվներ (3 օրինակ) տեխնիկական պայմանների ուսումնասիրություն և ձեռք բերում: Նախագծի համալիր փորձաքննության դրական եզրակացության ստացում: Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ --- Չափագրում, թերությունների ակտի կազմում</p> <p>Այլ պահանջներ --- Նախագիծը համաձայնեցնել շահագործողի և համայնքի ղեկավարի հետ: Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատումներն իրականացնել համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարության &lt;&lt;Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն</p>

կենտրոն»>> ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի: Օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշները նախահաշվում և ծավալաթերթում նկարագրել առավել մանրամասն և սպառիչ: Առաջարկվող շինանյութերը պետք է լինեն լավորակ:

Նախագծվող կառույցի բնութագիրը --- **Բյուրական համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում:**

Նախագծի տեսակը --- **Բյուրական համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում** աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում  
Նախագծի կազմը --- Աշխատանքների նախագիծ՝ աշխատանքների կազմման նախագիծ, լոկալ և ամփոփ նախահաշիվներ (3 օրինակ) տեխնիկական պայմանների ուսումնասիրություն և ձեռք բերում: Նախագծի համալիր փորձաքննության դրական եզրակացության ստացում:  
Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ --- Չափագրում, թերությունների ակտի կազմում

Այլ պահանջներ --- Նախագիծը համաձայնեցնել շահագործողի և համայնքի ղեկավարի հետ: Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատումներն իրականացնել համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն»>> ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի: Օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշները նախահաշվում և ծավալաթերթում նկարագրել առավել մանրամասն և սպառիչ: Առաջարկվող շինանյութերը պետք է լինեն լավորակ:

Նախագծվող կառույցի բնութագիրը --- **Թալին համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում:**

Նախագծի տեսակը --- **Թալին համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում** աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում  
Նախագծի կազմը --- Աշխատանքների նախագիծ՝ աշխատանքների կազմման նախագիծ, լոկալ և ամփոփ նախահաշիվներ (3 օրինակ) տեխնիկական պայմանների ուսումնասիրություն և ձեռք բերում: Նախագծի համալիր փորձաքննության դրական եզրակացության ստացում:  
Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ --- Չափագրում, թերությունների ակտի կազմում

Այլ պահանջներ --- Նախագիծը համաձայնեցնել շահագործողի և համայնքի ղեկավարի հետ: Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատումներն իրականացնել համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն»>> ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի: Օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշները նախահաշվում և ծավալաթերթում նկարագրել առավել մանրամասն և սպառիչ: Առաջարկվող շինանյութերը պետք է լինեն լավորակ:

Նախագծվող կառույցի բնութագիրը --- **Ուշի համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում:**

Նախագծի տեսակը --- **Ուշի համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում** աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում  
Նախագծի կազմը --- Աշխատանքների նախագիծ՝ աշխատանքների կազմման նախագիծ, լոկալ և ամփոփ նախահաշիվներ (3 օրինակ) տեխնիկական պայմանների ուսումնասիրություն և ձեռք բերում: Նախագծի համալիր փորձաքննության դրական եզրակացության ստացում:  
Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ --- Չափագրում, թերությունների ակտի կազմում

Այլ պահանջներ --- Նախագիծը համաձայնեցնել շահագործողի և համայնքի ղեկավարի հետ: Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատումներն իրականացնել համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն»>> ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի: Օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշները նախահաշվում և ծավալաթերթում նկարագրել առավել մանրամասն և սպառիչ: Առաջարկվող շինանյութերը պետք է լինեն լավորակ:

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
31 մայիս 2014թ.	06 հունիս 2014թ.

**Պատվիրատու**

ՀՀ Արագածոտի մարզպետարան  
 ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակի Վ.  
 Պետրոսյան 4  
 ՀՀ Ֆինանսների նախարարության  
 գործառնական վարչություն  
 հ/հ 900441041184 ՀՎՀՀ 05004247  
 Աշխատակազմի ղեկավար՝

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Էկոպրոնեկո» ՍՊԸ  
 ՀՀ Լոռու մարզ ք. Վանաձոր Աղայան 94/31  
 Հեռ. 094660025  
 ՎՏԲ-Հայաստան բանկ Վանաձոր մ/6  
 հ/հ 16036028818900 ՀՎՀՀ 06929779


Հ. Գևորգյան

(ստորագրություն)



Տնօրեն՝

Ա. Եգանյան





ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ\*

«Որսմ»

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թ.' ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Կարբի համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում աշխատանքներ	-	-	-	-	-	1 350 000	1 350 000	1 350 000	1 350 000	1 350 000	1 350 000	1 350 000	1350 000
2	Կարմրաշեն համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում աշխատանքներ	-	-	-	-	-	476 000	476 000	476 000	476 000	476 000	476 000	476 000	476 000
3	Բյուրական համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում աշխատանքներ	-	-	-	-	-	1 350 000	1 350 000	1 350 000	1 350 000	1 350 000	1 350 000	1 350 000	1350 000
4	Թալին համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում աշխատանքներ	-	-	-	-	-	765 000	765 000	765 000	765 000	765 000	765 000	765 000	765 000
5	Ուշի համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում աշխատանքներ	-	-	-	-	-	1 350 000	1 350 000	1 350 000	1 350 000	1 350 000	1 350 000	1 350 000	1350 000
Ընդամենը՝		-	-	-	-	-	5 291 000	5 291 000	5 291 000	5 291 000	5 291 000	5 291 000	5 291 000	5 291 000

\* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

Պատվիրատու

«Արագածոտի մարզպետարան»

«Արագածոտնի մարզ, ք. Աշտարակի Վ. Պետրոսյան 4»

Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

900441041184 ՀՎՀՀ 05004247

Աշխատակազմի ղեկավար՝

Գ. Գևորգյան

(ստորագրություն)

Վ.Տ

Վ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Էկոպրոեկտ» ՍՊԸ

«Լոռու մարզ ք. Վանաձոր Աղայան 94/31»

Հեռ. 094660025


ՎՏԲ-Հայաստան բանկ Վանաձոր մ/6

h/h 16036028818900 ՀՎՀՀ 06929779

Տնօրեն՝

Ա. Եգանյան

Վ.Տ



Կնքված N ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/5-ՆԱԽ-ՏՐԱՆՍՊՈՐՏ ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<\_\_\_\_>> <<\_\_\_\_\_>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ \_\_\_\_\_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<\_\_\_\_>> <<\_\_\_\_\_>> 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն՝ \_\_\_\_\_ ի \_\_\_\_\_ դեմ

և Կատարողը՝ \_\_\_\_\_ դեմ

ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը \_\_\_\_\_ 20\_\_թ-ից \_\_\_\_\_ 20\_\_ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

\_\_\_\_\_  
ստորագրություն

\_\_\_\_\_  
ստորագրություն

\_\_\_\_\_  
Ազգանուն, Անուն  
Կ.Տ.

\_\_\_\_\_  
Ազգանուն, Անուն  
Կ.Տ.